

ՖՈՒՆԿՑԻԱ

ԹԵՍՏ 1

1. Ֆունկցիան տրված է $y = x^2 - 3x - 4$ բանաձևով: Գտնել ֆունկցիայի արժեքը $x = -4$ դեպքում:

- 1) 12 2) 22 3) -32 4) 24

2. Երկու քաղաքների հեռավորությունը 360 կմ է: Մեքենան այդ հեռավորությունը պետք է անցնի t ժամում: Բանաձևի միջոցով տալ մեքենայի v արագության կախումը t ժամանակից:

- 1) $v = 360t$ 2) $v = \frac{360}{t}$ 3) $v = 360t^2$ 4) $v = \frac{360}{t^2}$

3. Տրված ֆունկցիաներից ո՞րն է գծային.

- 1) $y = 3x^2 - 3$ 2) $y = \frac{2}{x} + 4$ 3) $y = \frac{x}{3} - 5$ 4) $y = \frac{4x^2}{x} + 7$

4. Ստորև նշված թվազույգերին համապատասխան կետերից քանի՞սն են պատկանում $y = \frac{1}{2}x - 4\frac{1}{2}$ ֆունկցիայի գրաֆիկին.

$(0; -4)$, $(1; -4)$, $(0; -2)$, $(9; 0)$, $(4; -2,5)$, $(-9; 0)$, $(-9; -9)$, $(9; 9)$

5. Ո՞ր քառորդներում է գտվում $y = \frac{2,5}{x}$ ֆունկցիայի գրաֆիկը.

- 1) I և IV 2) I և II 3) II և IV 4) I և III

ԹԵՍՏ 2

1. Ֆունկցիան տրված է $y = 2x^2 - 6x + 5$ բանաձևով: Գտնել ֆունկցիայի արժեքը $x = -2$ դեպքում:

- 1) 9 2) 3 3) 25 4) 45

2. Երկու քաղաքների հեռավորությունը 450 կմ է: Մեքենան այդ ճանապարհը պետք է անցնի v կմ/ժ միջին արագությամբ: Բանաձևի միջոցով տալ այդ ճանապարհի վրա կորցրած t ժամանակի (արտահայտված ժամով) կախումը v արագությունից:

- 1) $t = 450v$ 2) $t = \frac{450}{v^2}$ 3) $t = \frac{450}{v}$ 4) $t = \frac{v}{450}$

3. Տրված ֆունկցիաներից ո՞րն է գծային.

- 1) $y = 2x + \frac{5x}{x}$ 2) $y = -\frac{4x}{5} + \frac{1}{5}$ 3) $y = x^2 + x$ 4) $y = \frac{x^2}{x-1} + 8$

4. Ստորև նշված կետերից քանիսն են պատկանում $y = 5x - 11$ ֆունկցիայի գրաֆիկին.

$$(0; 11), (1; 6), (0; 11), (-1; -16), \left(\frac{1}{5}; -12\right),$$

$$\left(-\frac{1}{5}; -12\right), \left(\frac{1}{10}; -10\right), \left(\frac{12}{5}; 1\right):$$

- 1) 4 2) 5 3) 3 4) 6

5. Ո՞ր քառորդներում է գտնվում $y = -\frac{5}{x}$ ֆունկցիայի գրաֆիկը:

- 1) I և II 2) II և III 3) I և III 4) II և IV

ԹԵՍՏ 3

1. Նշել ստորև բերված այն կետի համարը, որը պատկանում է $y = \frac{1}{4}x^2$ ֆունկցիայի գրաֆիկին.

1) $A\left(-1; -\frac{1}{4}\right)$ 2) $B(-2; -1)$ 3) $C(6; 6)$ 4) $D(-4; 4)$

2. Գտնել արտահայտության արժեքը.

$$(\sqrt{8} + \sqrt{2})^2 - (\sqrt{8} - \sqrt{2})^2 :$$

1) 20 2) 10 3) 16 4) $2(\sqrt{8} + \sqrt{2})$

3. Գտնել արտահայտության արժեքը.

$$\sqrt{7+4\sqrt{3}} - \sqrt{7-4\sqrt{3}} :$$

1) 14 2) $8\sqrt{3}$ 3) 4 4) $2\sqrt{3}$

4. Իրար հաջորդող զրո երկու բնական թվերի միջև է գտնվում հետևյալ թիվը.

$$\sqrt{30} + \sqrt{55} :$$

1) 13 և 14 2) 12 և 13 3) 14 և 15 4) 15 և 16

ԹԵՍՏ 4

1. Նշել ստորև բերված այն կետի համարը, որը պատկանում է $y = 8x^2$ ֆունկցիայի գրաֆիկին.

- 1) $A(-1; -8)$ 2) $B(-2; -16)$ 3) $C(0; 8)$ 4) $D(-3; 72)$

2. Գտնել արտահայտության արժեքը.

$$(\sqrt{7} - \sqrt{3})^2 + (\sqrt{7} + \sqrt{3})^2 :$$

- 1) $2\sqrt{7} + 2\sqrt{3}$ 2) 20 3) 10 4) $-4\sqrt{21}$

3. Գտնել արտահայտության արժեքը.

$$\sqrt{14 + 6\sqrt{5}} + \sqrt{14 - 6\sqrt{5}} :$$

- 1) 28 2) $2\sqrt{5}$ 3) 6 4) $12\sqrt{5}$

4. Իրար հաջորդող զրո երկու բնական թվերի միջև է գտնվում հետևյալ թիվը.

$$\sqrt{78} + \sqrt{111} :$$

- 1) 19 և 20 2) 18 և 19 3) 20 և 21 4) 17 և 18:

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

	Թ 1	Թ 2	Թ 3	Թ 4
1	4)	3)	4)	4)
2	2)	3)	3)	2)
3	3)	2)	4)	4)
4	4)	3)	2)	1)
5	4)	4)	-	-